

ըմբռնելի գարձուածներ. բնական լինի, ազատ տեսակ տեսակ խրթին ճանան բառերից և մանաւանդ անտեղի գաւառաբանութիւններից և գոհէկաբանութիւններից։ Պէտք է չմոռանալ, որ շատ մեծ տարբերութիւն կայ ժողովրդական և զոհնկավան բառերի մէջ և որ Տիրոջ խօսքի սրբութիւնը անվայել արտապայտութիւններով անարդ։ ոչ ոքի իրաւունքը չէ։ Ա. Գրքի ոճին հետեւլը կարող է այդ գէպքում շատ անտեղութիւններից պահել միայն թէ հետեւողութիւնը կուրօրէն, բառացի գարձուածներ կրկնելով չինի, այլ նոցա ոգուն համաձայնելով։ Լեզուին գեղեցկութիւն, նիրգաշնակութիւն և ոյժ տալ երբէք անփոյթ առնելու չէ։ Քարողի յաջողութիւնը մեծ կախումն ունի գորանից։

Անգղիսայում քարոզը սովորաբար կարգում են, սակայն բերան ասելու առաւելութիւնները յայտնի են. և մեր մէջ, ինչպէս ամեն տեղ, զա այնպիսի ընդհանուր սովորութիւն է, որ պաշտպանութեան կարիք չունի։ Քարողի միջոցին կանգ չառնելու համար լաւ է գրածը բառ առ բառ բերան անել. բայց որպէս զի կենդանի խօսքը սերտած դասի չփոխութիւնը հարկաւոր է նախ իրական մասը, բովանդակութիւնը մտքի մէջ ամփոփել ապա բառերի վերայ ուշազրութիւն դարձնել։ Յայտնի է թէ քարոզի ներգործութիւնը որքափ կախումն ունի արտասանութիւնից. շատ վարժութիւն և տակտ պէտք է, որպէս զի իւրաքանչիւր խօսք իւր իմաստին համասպատասխան արտապայտութիւն գտնէ։ Հարկաւոր է նախ, որ իւրաքանչիւր ունինդիր ասածը լսել կարողանայ, բայց դորա համար բարձր խօսելը միայն բաւական չէ. անտեղի կանչուտելը ընդհակառակն շատ անգամ խանգարում է լսողութեան։ Հարկաւոր է իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր տառ պարզ արտասանել ծանր, բայց բնական չափերը պահելով, տաքանալ միայն ուր պէտք է և ուր անկեղծ զգացում ներից է դա յառաջ գալիս. շեշտել բառերն ու նախադասութիւններն այնպէս, որ կարեւորն երկրորդականի մօտ աչքի ընկնի։

Արտաքին շարժումները շատ կարեւոր են խօսքին կենդանութիւն տալու համար, միայն պէտք է բնականութեան և վայելութեան սահմաններից գուրս չելնեն։

Կ. Ա.

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿԱՆ

1. ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Այս զարմանալի հոգեոր զինուորութիւնը, որ գարերից ի վեր կազմել է պապական եկեղեցին, ամենայն տարի նորանոր փորձեր է անում Հռովմի քահանայապետութեան իշխանութիւնը տարածելու և ամրապնդելու։

Մի հողմը թողնելով այս անընդհատ ձգտում ների արտապայտութիւնը, որով պապը ցանկանում է վերականգնել 1870 թուից ի վեր իւր կորցրած մարմնաւոր իշխանութիւնը, մեծ հոգս է տարածում այժմ պապի եկեղեցական իրաւասութիւնը տարածելու մասին։

Արևմտեան երկներում պապը հետզհետէ կորցնելով իւր յենակէտերը, աչք է ձգել արևելքի վերայ։

Արարատի ընթերցողներին յայտնի է արգէն պապի անցեալ տարուան առաջին շրջաբերականը (Pracelara Gratulationis), որով արևելեան եկեղեցիք հրաւիրում էին միանալու լատին եկեղեցու հետ։ Այս հովուականին յաջորդեց և գործնական փորձը, արևելեան միացեալ եկեղեցիների ներկայացուցիչների ժողովը։

Այս ժողովին յաջորդեց Լեռն ԺՊ. պապի երկրորդ նշանաւոր հովուականը, որ իւր սկզբի բառերից առնուած անունով «Dignitas ecclesiarium orientalium, (Պատիւ արևելեան եկեղեցեաց)» է կոչուում։

Այս հովուականը մի շատ նշանաւոր վաւերաթուղթ է, որովհետև սրանով միանգամ ևս ապացուցանուում է, թէ լատին եկեղեցին որոշ նպատակների հասնելու համար չէ խորշում և այնպիսի միջոցներից, որոնց նա դարերի ընթացքում հակառակ է ընթացել։ Այդ պապական կոնդակը արդարապէս առաքելական «սահմանադրութիւն» անունն է ստացել որովհետև դրա մէջ որոշուած են այն զիջումները, որ Պապական եկեղեցին անում է միացող եկեղեցիներին։

Լատին եկեղեցին, որ գարերի ընթացքում հակառակել է ազգային եկեղեցիների գոյութեան, ազգային լեզուների գործածութեան, այժմ հրապարակաւ յայտնուում է, որ կամենում է տար եկեղեցիների ինքնուրոյնութիւնը Շանաչել իւր իսկ գերիշխանութեան տակ։

Եթէ ամսաթերթիս էջերը ներին, առաջ կը բերենք այդ սահմանադրութեան կէտերը, սակայն պէտք է աւելացնենք, որ ինչպէս այլ արևելեան

եկեղեցիք, նոյնպէս և Հայաստանեայց եկեղեցին։ շատ են լսել այդպիսի խոստումներ և միշտ յուսախար են եղել, նորագոյն փորձերից զիտենք, թէ ի՞նչքան աղէտներ են ծնել հայ ազգի համար միանդամ հաստատուած իրաւունքների ժխտումից Հասունների և Ազարեանների ձեռքով։

Ահա այս իսկ անհաւատարմութեան հռչակն է, որ կ'արգելէ արևելեան քրիստոնեաններին հաւատալ պապական խոստումներին։

Յայտնի է՝ թէ ի՞նչքան համերաշխ և միարան է կաթոլիկ եկեղեցականութիւնն և ի՞նչպէս հաւատարիմ։ Կոյր հնազանդ լատին կղերը, ուստի և զարմանալի չէ, որ պապի քարոզած խաղաղութեան և միութեան հրաւերն այսօր արձագանք է գտնում աշխարհիս չորս կողմում։ Լատին եկեղեցականները, որ յայտնի են իրենց հետևողական արհամարհանքով գէպի միւս դաւանութիւնները, որոնց նրանք ամենքն էլ նզոլումէին ցարդ, այժմ սկսել են միութեան հրաւերն շցել և ակնարկել որ Հռովմից գուրս էլ փրկութիւն կարող է լինել։ Այս ձայնը լսուում է այժմ թէ քարոզների, թէ հովուականների և թէ հրապարակադրութիւնների մէջ։

Որ «առաքելական սահմանադրութիւնը» ծընունդ չէ միմիայն եղբայրսիրական առաքինութեան, որ պապը զիջումներ անելով զանազան ազգային եկեղեցիներին միմիայն եկեղեցու միութիւնը աչքի առաջ չունի, ամենալաւ կերպու ապացուցանում է Մակեդոնիոյ Կուկուշ քաղաքի բոլղար պապականների գարձը գէպը իրենց մայրենի եկեղեցու գիրկը։ Ինչպէս ամենուրեք, այնպէս էլ Մակեդոնիայի Կուկուշ քաղաքի լատինածէս բոլղարները զզուելով լատին կղերի ագահութիւնից և անիրաւ հաւածանքներից, քանից զիմել էին Հռովմիներկայացուցիչներին, բայց բաւականութիւն չէին ստացել։ Իրենց ազգային և տեղական իրաւունքները պաշտպանելու համար այս օրերս Կուկուշ քաղաքի եպիսկոպոս Մլադենովը իւր ամբողջ Հօտի հետ դարձաւ բոլղար եկեղեցու գիրկը և ճանաչեց Մակեդոնիոյ բոլղարական էկզարքոսի գլխաւորութիւնը փոխանակ Առովմի պապի։

Հին կլլ.թոլիկներ։

Այս անունն է կրում կաթոլիկ եկեղեցու նորագոյն հերձուածը, որ տեղի ունեցաւ 1871 ից յետոյ առաջնորդութեամբ Միւնիէնի համարաբանի նշանաւոր ուսուցչապետ և աշխարհահայուածուածաբան Դէոլինդերի։

Հին կաթոլիկների նպատակն է հրաժարուելով նորաշնար վարդապետութիւններից ու դաւանութիւններից, վերականգնել եկեղեցական ընդհանրական կամ իսկական կաթոլիկէ վիճակը։ Այս եկեղեցին առ այժմ թէպէտ և քիչ հետեւողներ ունի, սակայն դորա հետեւողներնը մեծաւ մասամբ կրթուած և գիտնական դասակարգիցն են։ Հին կաթոլիկները մի համերաշխ բանակ են կազմել բոլոր ազգերին պատկանող դաւանակիցներից և տարեց տարի զօրաւոր մարտ են մղում կաթոլիկութեան գէմուան գէմ։

Հին կաթոլիկների գլխաւոր յատկանիշներից մէկն էլ նրանց անխարականութիւնն է։ որով վերաբերում են առ հասարակ գէպի քրիստոնեայ, մանաւանդ հին քրիստոնեայ եկեղեցիք։

Հին կաթոլիկներն ամենայն տարի համաժողովներ են կազմում Եւրոպի զանազան կենդրոններում, ուր քննութեան են առնում լատին եկեղեցու զեղծումները, Նախընթաց տարուն համաժողովը տեղի ունեցաւ Հոլլանդայի Պոտեկրդամ քաղաքում։ Այս եկեղեցու բերանն է «Միջազգային աստուծաբանութեան հանդէսը» ուր հիւրընկալուում ոչ միայն արևմտեան, այլ նաև արևելեան աստուծածարանների յօդուածները։

### ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Արևելքում եղած օրթոդոքսների թիւն հաշուում են 25 000·000, սրանից 16—18 միլիոն սլավոններ և ոռոմիններ են, 6—7 միլիոն էլ յոյն, արաբ, ասորի և այլ ազգեր, Արևելեան Օրթոդոքսները ենթակայ են 15 ինքնազլուխ եկեղեցական վարչութեանց, Այդ եկեղեցական գլխապետութիւններն են։

1. Ա. Պոլսի, Ալեքսանդրիայի, Խնամիոքի և Երուրուսական պատրիարքութիւնները յոյն պատրիարքներով։
2. Եկեղեցու Ալեքսանդրիական Կիպրոսի և Սինայի (Սոյնպէս յոյն)։
3. Հելլենական եկեղեցու վարչութիւնը։
4. Սլավեան եկեղեցիների նուիրապետութիւնները։ Սերբիական — չեռոնոգորիական, կառլովիշեան, բռնիական և հերցգովինական, բուկովինագալմատական, ոռոմինիական և բոլղարական։

5. Տիեզերական ԿԱՄ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆՆ.

Յունուարի 20-ին տեղի ունեցաւ յունական նոր պատրիարքի ընտրութիւնը Կ. Պոլսում։ ընտըրուած է Անժիմոս Ե., որ ցարդ առաջնորդ էր Կա-

լեմնից թեմի, Անթիմոս պատրիարքի ընտրութիւնը սուլթանը վաւերացրեց, վաւերացութիւնը յետոյ նոր պատրիարքը ներկայացաւ սուլթանին, ապա դարձաւ Ֆէների պատրիարքարանն, ուր տեղի ունեցաւ պատրիարքական գանձ ամրաւնալու հանդէսը:

Նորընտիր պատրիարքը ծնուած է 1829 ին, ծնողները նրան կամենում էին աշխարհական կեանքի համար պատրաստել բայց ինքը բնական հակումն ունենալով կրօնական կեանքի, յոնիական կը դիմուի առաջնորդ Յովհաննիկիոս եպիսկոպոսի ինամոց շնորհիւ անձնատուր եղաւ կրօնական ուսմունքների և Խալկիի աստուածաբանական գպրոցն աւարտելով կրօնաւոր դարձաւ:

\* Յաղագս աստուածութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի վերնագրով շարագրութիւնը հըրատարակելուց յետոյ որ ուղղուած էր Ուշնանի յայտնի գրուածքի դէմ արժանացաւ աստուածաբանութեան վարդապետութեան և դասատու կարգուեց Զոսիմեան գպրանոցում: 1869 թուին եպիսկոպոս ձեռնադրուեց և հետզիւտէ վարեց շատ թեմերում առաջնորդական պաշտօն: Նորընտիր պատրիարքն յայտնի է իւր խաղաղասիրութիւնով և խիստ բարեպաշտութեամբ:

Մակեդոնիոյ օրթոգրամները մէկը միւսի հետից ցանկութիւն են յայտնում յունական լուծը թօժափելու իրենց վրայից: Տիեզերական յոյն պատրիարքները միշտ առաջնակարգ տեղ են տալիս յունական աղդային ձգտումներին և ձնչումնեն բոլղար, սերբ և ռումինիացի յունադաւաններին: Եյս ձնչումից արդէն ազտառեցան բոլղարները որոնք անկախ էկղագրոսութիւն կազմեցին տաճիկ կառավարութեան թօլտուութեամբ: Եյսպէս կոչուած բոլղարական հերձուածը գերա շարունակում է զրադեցնել տիեզերական պատրիարքարանին: Որ միջոցներ է վինտուում իւր խլուած իրաւունքն յետ ստանալու:

Բոլղարացոց օրինակը քաջալերել է սերբերին և ուոմիններին: Որոնք խնդիր են յարուցել իրենց մայրենի լեզուով ժամասացութեան իրաւունք ստանալու մասին: Պատրիարքարանը մերժել է այս արդարացի պահանջն և ինչպէս հեռագիրն հաղորդում է: արդէն իսկ սերբերին հրաման է գնացել կառավարութեան կողմից: Որ հպատակին պատրիարքարանի կարգադրութեան: Ակներել է, որ այսպիսի վիճակը երկար չէ կարող տևել:

2. ՌՈՒՍՈՑ ԵՒԵԼ: ՅԻ.

Յունուարի 22-ին հանդիսաւոր կերպիւ տօնուեցաւ Մոսկուայում ուսւական առաքելութեան

(միսիոնարական ընկերութեան) 25 ամեայ գործունէութեան յօրելեանը, Եյս ընկերութեան հիմնադիրն է Մոսկուայի մետրոպոլիտ Իննովիլինատիոսը, որի անուան յիշատակն յաւերժացնելու համար որպաշտեցաւ երկու առաքելական կայան հիմնել Անդրբայկալեան շրջանում: Յօրելեանի օրուան յիշատակն անմահացնելու համար վճառուած է Պոկրովի վանքին կից մի առաքելութեան գպրոց բանալ:

Եյս առաքելութեան ընկերութեան հաշուից երկում է, որ անցեալ տարի անդամների թիւն է եղել 12.735: իսկ ընկերութեան գրամագլուխը 1.429.054 ուուրլի, որից 1894 թ. ծախսուել է 225.846 ռուբ.:

Եյդ տարուան ընթացքում Ալտայեան շրջանում մկրտել են 352 կռապաշտների և 8 մաշմետականի: իսկ Ճափոնիայում 1.182 անձանց:

Ուուսաց առաքելութիւններից յաջողագոյնը Ճափոնականն է, ուր 220 եկեղեցական համայնք կան 21.239 անդամ՝ ունեցող:

\*  
\* \*

Ուուսաստանի թեմերում հետզիւտէ քաղաքակրթական հաստատութիւնները բազմանում բացի եկեղեցական գրադարաններից: շատ թեմերում հաստատուումն այժմ եկեղեցական հնագիտական ընկերութիւնների թանգարաններ:

\*  
\* \*

Հրէաներին ուու եկեղեցու գիրկն ընդունելու ձեւը գոհացուցիչ չը համարելով առանձին մասնաժողով էր կազմուած Աելնայում: այդ խնդիրը քննելու և ըրդ լսուում է թէ այդ մասնաժողովը նոր կանոն է մշակել հրէաց համար: որի զօրութեամբ օրթոգրամ մկրտուիլ ցանկացողը պէտք է մի յայտնի հրահանգիչ եկեղեցականի հսկողութեան տակ գտնուի և եթէ քրիստոնավայել ընթացք ցոյց տայ, միայն ժամանակ արժանանայ մկրտութեան:

### ԱՆԴԻ ԵԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ:

Հուոմի պապի աղդեցութիւնից դուրս եկած եկեղեցիներից անգլիկան կամ եպիսկոպոսական եկեղեցին գարձեալ աւելի մերձաւրագոյնն է կաթոլիկ եկեղեցուն: քան միւս բոլղարական եկեղեցիք: Պապը եկեղեցիների միութեան գաղափարով տոգորուած ամեն կողմը գաշնակիցներ է վինտուում սկսած Ամերիկայից մինչև Երուսաղէմ: Ինչպէս եւրոպական լրագիրներն հաղորդում են՝ Լեռն Ժ. պապին այժմ առանձնապէս զրադեցնում է անգլիկան եկեղեցին: ուստի և նա յանձնարարել է Աղոյան

կարգենալին, որ այդ մասին իրեն զեկուցումն տայ, Առգան կարգինալի առւած զեկուցումն ամենենին նպաստաւոր չէ այդ խնդրին, սակայն պապը չէ կը տրել իւր յօյը և ըլ նայելով Անգլիոյ կաթոլիկների հօգուի խորհրդին, նա մտագիր է եպիսկոպոսական եկեղեցուն հրաւեր կարգալ և այդ հրաւերի մէջ հաւանաւթիւն տալ եպիսկոպոսական եկեղեցու ձեռնադրութեան առաքելական լինելուն։ Այդ մասին պապը հրամայել է եկեղեցական խորհրդին հետազոտութիւններ անել և իրեն զեկուցանել։

U.S.A.



ԱՐԴՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՀԵՔՍԱՆԴՐ Գ. ԿԵՑՈՒՐ ԺԱՄԱՆԱԿ.

բովեսսոր Կիկոլայևսկին ռուսաց Եկեղեց-  
ւոյ Համբաւարեր ի անցեալ 1894 թուի  
վերջին վեց Համբաներում մի ընդարձակ օգուած  
է զետեղել ռուսաց Եկեղեցու բարգաւաճման մասին  
ի Տէր Հանդուցեալ Աղեքսանդր Գ-ի կայսերութեան  
շրջանում: Այդ յօդուածը, մանաւանդ նրա վեր-  
ջին մասը՝ շատ հետաքրքրական տեղեկութիւններ  
է Հաղորդում ռուս Հոգեորականութեան գործու-  
նեութեան մասին: Օրոնք անշուշտ շահեկան կը լի-  
նին նաև Արարատի ընթերցողների համար ռուսի  
և քաղուածօրէն առաջ ենք բերում այստեղ:

Ուռասց եկեղեցին և հոգևորականութիւնը չանգուցեալ կայսրի առանձին հոգածութեան առարկան է եղել միշտ իսկ ուստի հոգևորականութիւնը մի այսպիսի զօրեղ հովանաւորի առաջնորդութեամբ աշխատել է ի գերեզմանել իւր վրայ դրուած յօյսերը:

Այդ զօրեալ շարժումից անմասն չէր մանաւանդ ամենազ լիսաւոր նպաստողն իսկ էր ռուսաց սինօդը՝ որ 1881 թուի մարտի 1-ից յետոյ իւր շրջաբերականներով ուղղութիւն և ընթացք էր տալիս գործին. Նրա օրինակին հետևեցին նաև թեմական առաջնորդները. օրոնք հոգուական շրջաբերականներով նորհուրդներ սկսան տալ իրենց ստորագրեալներին. Քաջալերեալ և գործի հրամիրեալ.

Այդ շրջանում ոռու եկեղեցականները առանձին ուշադրութիւն դարձրին քարոզի վերայ. բազմաթիւ քարոզներ հրատարակուեցան. քարոզը լըսում էր և մասմովի մէջ քարոզ էին առում եկեղեցիներում թէ ժամասացութիւնից առաջ և թէ ժամասացութիւնից յետոյ. այդ բաւական չէ. քարոզներ էին առում նաև եկեղեցուց դուրս մասնաւոր աներում. ժողովարաններում և ժողովուրդներում սիրով յաճախում էր այդ քարոզներին.

Բացի սրանից առանձին ընկերութիւններ կազմ  
ու եցան իւսունակ ընկերութիւններ և բարութիւններ  
անելու համար։ Այդպիսի ընկերութիւնների  
մէջ աշքի և ընկնում Պետքերութիւն ընկերութիւնը  
որ 1881 թ. ազգի կ-ին հիմնուեց, Այդ ընկեր  
ութիւնն արգելն երկու եկեղեցի ունի շնչած, իսկ

Նրանց մօտ էլ առանձին շինութիւն կրօնական ընթերցումներ, զբոցների և ձրի գրադարանի համար:

Հոգեռականութիւնը իւր ուշադրութիւնը ամենից աւելի գարձրեց նվազաւութիւնը և հաջողականութիւնը ուղարկութիւնը կերպով, թէկ ուսւ հոգեռականութիւնը գետ 1836 թուից բարձրագոյն հրաւեր էր ստացել ամենայն տեղ եկեղ. — ծընթական ուսումնարաններ բաց անելու և մինչև 1865 թիւը բաւական աջղողութեամբ էլ գործն առաջ էր տանում. բայց այդ թուից յետոյ հոգեռականութեան ու լուսաւորութեան մինիստրութեան մէջ ագած տարածայնութիւնների պատճառով հոգեռականութեան ուսումնարանական գործունէութիւնը սահմանափակուեց, այնպէս որ 1865 թուին հոգեռականութեան ձեռին գտնուած ուսումնարանների թուից, որ 21.000 ի էր հասնում 1881 թուին միայն 3000 էր մնացած. Բայց 1881 թուից հոգեռականութիւնը հրաւեր ստացաւ ոչ միան մասնակցել կրթական գործին, այլ և տիրապետող ազգեցութիւն ձեռք բերեց սաներին կրօնական ուղղութեամբ կրթելու համար. Թէկ այդ ժամանակուայ լուսաւորութեան մինիստր բարձր նիկոլային գէմ էր այդպիսի ուղղութեան և մինիստրների խորհրդում աշխատում էր, որ կրօնի գասատուութիւնը աշխարհական ուսուցիչների և ուսուցչների յանձնուի, բայց և այնպէս նրա առաջադրութիւնը մնաց առանց հետեւանքի և հոգեռականութիւնը գերակշռու ազգեցութիւն ստացաւ. Այդ որոշումը հաստատուեց 1882 թուի յունուարի 26 բարձրագոյն հրամանով և խնդրի մշակումը յանձնուեց ուսուցչներին. 1884 թուի յունուարի 13-ին բարձրագոյն համութեամբ հաստատուեցան սինօդի մըշական եկեղեցների հանունները՝ որոնք անմիջապէս միաժամանակ գործ դրուեցան բոլոր իւմերում. Այդ կանոնները որոշումնեն եկեղ. — ծխական ուսումնարանների նպատակը, որ է հաւատոյ գիտելիքներ տալ աշխերաներին. Ուսումնարանները երկու կարգի են. միջաւեան — երկու տարուայ գասղնթացով, և երկգաւեան — չորս տարուայ գասղնթացով. Եւանդելի աւարկաներն են 1) կրօն. — աղօթքներ, սուրբ գրոց պատմութիւն, ժամասցութեան բացատրութիւն և համառօտ հաւատապատում. 2) եկեղեցական երգեցութիւն, 3) եկեցական և գործածական գրեանց ընթերցանութիւն և գրութիւն. 4) թուաբանական տարրական ուսումնուն: Երկգաւեան գպրոցներում բացի գրանից աւանդուում էր նա և Պուտաց համառօտ պատմութիւն. Այդ բոլորի համար առանձին առանձին ծրագրիներ կան հրատարակուած. իսկ ուսումնարանների կազմակերպութիւնն ու առարկաների գասաւանդութիւնն ամբողջովին յանձնուած է հոգեռականութեան և, մասամբ միայն հոգեռականների որդոց, եթէ նրանք աւարտած էին որ և է հոգեռ սեմինարիա կամ թեմական (արական կամ աղջկանց) ուսումնարան. Սակայն գործի աջղութեան համար հարկաւոր էր, որ գասատու հոգեռականները գէմ մասամբ ծանօթ լինէին մանկավարժութեան: Եւ աշա որպէս զի հոգեռականներից մանկավարժներ պատրաստուին. 1885 թուին սեմինարներին կից փորձնական տարրական գպրոցներ բացուեցան, ինչպէս և մի քանի աղջկանց թեմական ուսումնարաններին կից սուրբն կարգի եկեղեցական գպրոցներ հիմնուեցան. Մենցին նպատակով